# ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ 86

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

# 86

# ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

## “ԳԻՐ, ԳԻՐՔ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ”

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Հայ Մշակութային Ընկերակցութիւնը
իր այս տարուան «Մշակոյթի Ամիս 86»ը կը բնաբանէ՝
Գիր, Գիրք, Գրականութիւն

# ՄԵՐ ԽՕՍՔԸ

Համազգային Հայ Մշակութային Ընկերակցութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, այս տարի եւս կը կազմակերպէ «Մշակոյթի Ամիս»ը ձեռնարկելով բազմերես եւ բազմազան մշակութային գործունէութիւն, այլեւս աւանդական դարձած Հոկտեմբեր ամիսը նուիրելով հայ մշակոյթին:

Այս տարի, Շրջանային Վարչութիւնը Մշակութային Ամսուան բնաբան ընտրած է «Գիր, գիրք, գրականութիւն», «Մշակոյթի Օրը» նուիրելով հայ գիրին եւ գիրքին, կազմակերպելով գիրքերու ցուցադրութիւն մը ինչպէս նաեւ, Գնահատանքի Ճաշկերոյթ, պատուելու հարաւային Գալիֆորնիոյ Ազգային վարժարաններու հայերէն լեզուի եւ հայ գրականութեան ուսուցիչները:

Համազգայինը ջերմապէս կը հաւատայ հայ մշակոյթին սահմանուած առաջնահերթ դերին, իբր հայակերտումի անուրանալի ազդակ, եւ կոչուած մեր մշակութային ժառանգութեանց պահպանման եւ յարատեւման:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՇԱՐԱԿԱՆ

*«Որք զծորանս Հոգւոյն արբին*
*եւ ընդ ժամանակս ժամանակս երգեցին*
*զեղենակաւոր երգս Շարականաց»:*

Իմ պապերուս հաւատքին՝ միւռոնաբո՜յր գանձարան..
Փըթթող ծաղիկ՝ դարերու քարանձաւին մէջ մըթին...
Մեղեդիներդ ամէն օր աղօթքի պէս հոտեւան,
Կաթիլ կաթիլ կը ծորին հոգիիս մո՛ւթ անդունդին:

Պապերն իմ վեհ՝ հիւսեցին քե՛զ երկնառաք տառերով,
Ծունկին իրենց մագաղաթ՝ մոմերու նուրբ լոյսին տակ...
Քեզմով հաւա՛տք երգեցին հայկեան սուրբերն՝ անխըռով,
Շնորհալին երկիւղած ու Սիւնեցին նահատակ...:

Վըշտապատար սրտերու՝ ամէն առտու իրիկուն,
Դուն օրհնութիւն կ'անձրեւես խունկի բոյրով թաթաւուն,
Ու շրթներու նըւագին կ'ըլլաս խորհուրդը մաքուր:

Մեր գմբէթին վերեւ դո՛ւն, դըրօշի պէս ոսկեհուռ,
Միշտ կը բացուիս, կը բացուի՜ս խաղաղութեան ծիրանի...
Դարեր կ'անցնին՝ բայց յաւէտ դո՛ւն կը մընաս գեղանի՝

Հայ խնկաբոյր խորանին քաղցրահնչիւն մեղեդին:

ԶԱՐԵՀ ԶԱՐԳՈՒՆ

# ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՑԱՆԿ

**Ուրբաթ, Հոկտեմբեր 3, 1986**
**Շաբաթ, Հոկտեմբեր 4, 1986**
ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ — **ԱԼՇԻԼ ԿՈՐՔԻ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՄԻԱՒՈՐ**
Հայ Կեդրոն - Հոլիվուտ

**Կիրակի, Հոկտեմբեր 5, 1986**
ՍԵՒԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ԵԼՈՅԹ — **ՂԵԿԱՎԱՐ՝ ԺՈՐԱ ՄԱԿԱՐԵԱՆ**
Ուիլշըր Իպէլ - Լոս Անճելըս

**Կիրակի, Հոկտեմբեր 12, 1986**
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ — **ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ**
Վան Նայս Ծունյըր Հայ Սքուլ - Հովիտ

**Ուրբաթ, Հոկտեմբեր 17, 1986**
ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ
Բաղրամեան Սրահ - Մոնթեպէլլօ

**Ուրբաթ, Հոկտեմբեր 24, 1986**
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ — **ՎԱՉԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ**
Աւետիսեան Սրահ - Հովիտ

**Կիրակի, Հոկտեմբեր 26, 1986**
ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐՈՒԱՅ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ - **ՇԱՒԱՐՇ ԹՈՐԻԿԵԱՆ**
Աւետիսեան Սրահ - Հովիտ

**Հինգշաբթի, Հոկտեմբեր 30, 1986**
ՊՏՂԱՁՕՆ — **ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ ԳՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ**
Կարապետեան Սրահ - Հոլիվուտ

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐ

**ՍԻՄՈՆ ՊՕՂՈՍԵԱՆ**

Ծնած է Երեւան
Աւարտած է "Յակոբ Կոճոյեան" նկարչական դպրոցը ինչպէս նաեւ Երեւանի գեղարուեստա-թատերական հաստատութեան գեղանկարչութեան բաժինը: Մասնակցած է կերպարուեստի շուրջ 10 ցուցահանդէսներում:

**ՍԵՐԳԷՅ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ**

Ծնած է Երեւան
Աւարտած է Երեւանի "Փանոս Թէրլեմեզեան" Գեղարուեստաքանական հիմնարկը եւ տիրացած արձանագործութեան վկայականին:
Մասնակցած է աւելի քան 10 ցուցահանդէսներու:

**ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ**

Ծնած է Հալէպ
Աւարտած է Երեւանի "Փանոս Թէրլեմեզեան" գեղարուեստաթատերական հաստատութիւնը:
Մասնակցած է աւելի քան 12 ցուցահանդէսներու:

**ՌԱՖՖԻ ՊՕՅԱՃԵԱՆ**

Ծնած է Լեռնական
Աւարտած է Երեւանի "Փանոս Թէրլեմեզեան" Գեղարուեստաքանական հիմնարկը:
Մասնակցած է միջազգային եւ տեղական բազմաթիւ ցուցահանդէսներու:

ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3, 1986 — ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7-ԷՆ - 11
ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 4, 1986 — ԺԱՄԸ 11-ԷՆ - 10

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ «ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ» ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՄԻԱՒՈՐԻՆ

# ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Կը մասնակցին՝ ՍԻՄՈՆ ՊՕՂՈՍԵԱՆ
ՍԵՐԳԷՅ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ
ՐԱՖՖԻ ՊՕՅԱՃԵԱՆ

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆ»
1203 N. VERMONT, HOLLYWOOD

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐ

ԱՂՋԻԿՆԵՐ

Լուսինէ Գալստեան
Նարինէ Կարապետեան
Նանար Հարպոյեան
Զարթար Սարեան
Վանուհի Օտապաշեան
Հայկանուշ Դիլոզեան
Մարինէ Դիլոզեան
Սրբուհի Աւետիքեան
Վիվիէն Քէշիշեան
Կարինէ Աւետիքեան
Արշալուհի Թերզիպաշեան
Անի Սաթամեան
Իրմա Դարեան
Դանի Դարեան
Իզապելլա Իգնոսեան
Սերա Հաճինեան
Անժելա Սավոյեան
Տենիս Յակոբեան
Անիթա Ալթունեան
Ռեբեկա Քիլիկեան

ՄԱՆՉԵՐ

Արմէն Մակարեան
Արա Մելգոնեան
Ստեփան Մակտայեան
Հրաչ Բաշմակչեան
Ռուբէն Յակոբեան
Արմէն Յակոբեան
Ասատուր Ազարեան
Ծանթ Սավոյեան
Արա Տիգրանեան
Վարուժան Քարեան
Յակոբ Չաքարեան
Աւօ Յովհաննէսեան
Շիրազ Սավոյեան

ՓՈՔՐԵՐ

Ժանի Գաբրիէլ
Ծաhան Սավոյեան
Դաւիթ Մոսիկեան
Կարիկ Գույումճեան
Ռաֆֆի Սարաֆեան

**ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 5, 1986** **ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7-ԻՆ**

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

## ՍԵՒԱՆ

ՊԱՐԱԽՈՒՄԲԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԲԵՄԱԴՐԻՉ

**ԺՈՐԱ ՄԱԿԱՐԵԱՆ**

ԵՐԳԻՉՆԵՐ՝

**ՀԵՂԻՆԷ ՀԱՐՊՈՅԵԱՆ**

**ԵՒ**

**ՀԵՆՐԻԿ ՄԻՀՐԱՆԵԱՆ**

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ՝

**ԱՐՄԷՆ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ**

ՏԱՐԱԶՆԵՐ՝

**ԱՆԺԵԼԱ ՍԱՎՈՅԵԱՆ**

«ՈՒԻԼՇԸՐ ԻՊԷԼ» ԹԱՏԵՐԱՍՐԱՀ - ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

4357 WILSHIRE BLVD., LOS ANGELES

**ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ**

# ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐ

ՍԻՐԱՆՈՅՇ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

Ծնած է Երեւան
Աւարտած Երեւանի Չայքովսքի երաժշտական դպրոցը. Փոքր տարիքէն շահած է դաշնամուրի միջ-հանրապետական մրցոյթը:

ԱՆԻ ՔԻԼԱՂՊԵԱՆ

Ծնած է Հալէպ
Բարձրագոյն ուսումը ստացած է FULLERTON College-ի մէջ
Արժանացած է շատ մը մրցանակներու եւ մենաշնորհներու:

ԱՐՄՈՆԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Ծնած է Թեհրան
Դաշնամուրի, թէորիք եւ շարժումի բարձրագոյն ուսումը կը շարունակէ UNIVERSITY OF REDLANDS-ի մէջ:

ՍԳԱՐԼԷԹ ՍԱՐՈՅԵԱՆ

Ծնած է Թեհրան
Երաժշտական ուսումը ստացած է Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ եւ արժանացած շատ մը մրցանակներու:

ՌՈՊԸՐԹ ԿԱԲՐԻԷԼ

Ստացած է դաշնակի BACHELOR'S DEGREE տիտղոսը
Մասնակցած է շատ մը խմբային երաժշտութեան:

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 12, 1986 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7-ԻՆ

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
# ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
# ՀՈՎԻՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ

**ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ**
**ԱՆԻ ՔԻԼԱՂՊԵԱՆ**
**ԱՐՄՈՆԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**
**ՍԳԱՐԼԷԹ ՍԱՐՈՅԵԱՆ**
**ՌՈՊԸՐԹ ԿԱԲՐԻԷԼ**

«ՎԱՆ ՆԱՅՍ ՃՈՒՆԻԸՐ ՀԱՅ ՍՔՈՒԼ»Ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀ
5435 VESPER AVE., VAN NUYS

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐ

ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

Ծնած է Երեւան
Աւարտած Երեւանի Չայքովսքի երաժշտական դպրոցը. Փոքր տարիքէն շահած է դաշնամուրի միջ-հանրապետական մրցոյթը:

ԱՆԻ ՔԻԼԱՂՊԵԱՆ

Ծնած է Հալէպ
Բարձրագոյն ուսումը ստացած է FULLERTON College-ի մէջ
Արժանացած է շատ մը մրցանակներու եւ մենա-շնորհներու:

ԱՐՄՈՆԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Ծնած է Թեհրան
Դաշնամուրի, թէորիք եւ շարժումի բարձրագոյն ուսումը կը շարունակէ UNIVERSITY OF REDLANDS-ի մէջ:

ՍԳԱՐԼԷԹ ՍԱՐՈՅԵԱՆ

Ծնած է Թեհրան
Երաժշտական ուսումը ստացած է Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ եւ արժանացած շատ մը մրցանակ-ներու:

ՌՈՊԸՐԹ ԿԱԲՐԻԷԼ

Ստացած է դաշնակի BACHELOR'S DEGREE տիտղոսը
Մասնակցած է շատ մը խմբային երաժշտութեան:

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 12, 1986

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7-ԻՆ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
## ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
## ՀՈՎԻՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ

**ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ**
**ԱՆԻ ՔԻԼԱՂՊԵԱՆ**
**ԱՐՄՈՆԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**
**ՍԳԱՐԼԷԹ ՍԱՐՈՅԵԱՆ**
**ՌՈՊԸՐԹ ԿԱԲՐԻԷԼ**

«ՎԱՆ ՆԱՅՍ ԺՈՒՆԻԸՐ ՀԱՅ ՍՔՈՒԼ»Ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀ
5435 VESPER AVE., VAN NUYS

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՀԱ՛Յ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՎԱՐՁՔԴ ԿԱՏԱՐ...

58 տարի առաջ, հայու ոգին, միտքը եւ մանաւանդ մշակոյթը վառ պահելու, տարածելու և ուսուցանելու ու իր հարազատ զաւակներուն սեփականութիւնը դարձնելու առաջադրութեամբ ծնունդ առաւ, հիմնուեցաւ եւ կեանքի կոչուեցաւ «Համազգային»ը:

Ու այսօր, շուրջ 60 տարիէ ի վեր, համայն հայ սփիւռքի տարածքին, նոյն այդ սփիւռքի պատմութեան էջերուն վրայ ան հարազատօրէն կը քանդակէ իր անունը:

Ժողովուրդը հաւաքել իր կորիզներուն, չձգել որ ան ծերանայ եւ աւելին կառչած պահել իր մշակոյթին:

Ահա «Համազգային»ը եւ իր գլխաւոր դերը մեր կեանքին մէջ:

Նորութիւն մը չէ ան մեզի համար:

Գաղութէ գաղութ տողանցելով, յաճախ դանդաղ բայց միշտ հաստատ, ան կրցած է շրջաններէն ներս մեր հոգեկան հարստութեան թանգարանէն, անհատնում պահեստէն, եթէ կ'ուզէք, սնուցանել մեզ բոլորս:

Նորութիւն մը չէ «Համազգային»ը եւ մանաւանդ Հոկտեմբեր ամիսը մշակոյթի ամիս անուանելու կամ վերածելու իր նախաձեռնութիւնը եւ աւանդութիւնը:

Ու այսպէս ամբողջ ամիս մը, ծրագրուած ճիգով եւ թափով հայ հանրութեան կը ներկայացնէ հայ երգէն ու պարէն, հայ արուեստէն ու երաժշտութենէն, այլ խօսքով՝ հայ մշակոյթէն պատառներ, ելոյթներու, երեկոներու եւ դասախօսութիւններու պատշաճ շրջագիծով մը եռիզուած:

Հարազատ իր հիմնադիրներու կոչումին եւ մանաւանդ իր գեղեցիկ աւանդութեան, այս տարի եւս «Համազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը այս Հոկտեմբերին պիտի հրամցնէ ա'յն՝ ինչ որ կը վերանորոգէ մեզ հոգիով եւ կ'արտայայտէ եւ միաժամանակ կ'ամրապնդէ մեր կորովը:

Այլ խօսքով, այս տարի Հոկտեմբերի կիսուն, Մշակոյթի Օրուան յատուկ հանդիսութեան, «Համազգային»ի Շրջանային Վարչութիւնը ծրագրած է պատուել հայ գիրի եւ գրականութեան անխոնջ մշակը՝ հայ լեզուի ուսուցիչը:

Այսպէս, շրջանիս Ազգային վարժարաններէն ներս հայերէնի դասատուն այս Հոկտեմբերին ի պատուի է:

Հայ խօսքը, հայ գիրը եւ հայ «լոյսը» մեր մատղաշ սերունդներուն մտքին մէջ սերմանողը պիտի մեծարուի առ ի գնահատանք իր վաստակին եւ երախտագիտութիւն՝ իր կատարած աշխատանքին:

Ինչ կ'ուզէք ըսէք, ինչպէս կ'ուզէք դասաւորեցէք եւ կամ որակեցէք,

Հայ վարժապետը, ուսուցիչը կամ դասատուն, հայ լեզուի եւ գրականութեան համեստ պաշտօնեան պիտի յարգուի հրապարակային կերպով եւ ասկէ աւելի գեղեցիկ եւ կշռուած ձեւ կարելի չէ գտնել:

Պատուել մէկը, որուն այնքան կարօտը ունինք աշխարհի բոլոր կողմերը:

Երախտագիտութիւն յայտնել մէկուն, որուն շունչին տակ սերունդներ կը մեծնան, կը դաստիարակուին ու իրենց ազգի տենչացող «լոյսին» կը կառչին:

Ասկէ աւելի իմաստալից ձեւ եւ որդեգրում հաւանաբար շատ քիչ կարելի է գտնել, ճարել:

Պոաւօ մը «Համազգային»ին

եւ

Երախտագիտութեան ջերմ խօսք ու բարի մաղթանք մեր լեզուի բոլոր դասատուներուն:

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

*Ասպարէզ 9-27-1986*

**ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 17, 1986** **ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8-ԻՆ**

# ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Նուիրուած՝

**ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ**
**ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒՆԵՐՈՒՆ**

Նախագահութեամբ՝

Թեմիս Բարեջան Առաջնորդ
**ԳԵՐՇ. Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Կազմակերպութեամբ՝

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

## ՅԱՅՏԱԳԻՐ

**ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ**
**ԱՂՕԹՔ**

| | |
|---|---|
| **ԸՆԹՐԻՔ** | Նուագ՝ Էտի Հօշարեան |
| **Խօսք** | Գուրգէն Գասապեան, Ատենապետ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-ի Շրջ. Վարչութեան |
| **Մեներգ** | Հեղինէ Հարպոյեան |
| **Դաշնակի Ընկերակցութիւն** | Նորա Ռումեան |
| **Ասմունք** | Լալա Սահակեան |
| **Ուղերձ** | Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ |
| **Խօսք Ազգային Վարժարաններու ուսուցիչներէն** | |
| **Յուշագրերու Տուչութիւն** | |

«ԲԱՂՐԱՄԵԱՆ ՍՐԱՀ» ՄՈՆԹԵՊԵԼԼՕ
900 W. LINCOLN AVE., MONTEBELLO

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ ԵՒ ՎԱՉԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Պր. Վաչէ Պարսումեան Պէյրութի Ամերիկեան Համալսարանի երաժշտական ղեկավարը եղած է, որ ներկայիս կը գտնուի Լոս Անճելըս: Ան իր խմբավարի մասնագիտութեան հետեւած է Փրինսթընի Ուէսթմինսթըր Կուայր Գոլէճի մէջ, Նիւ Ճըրզի ուրկէ վկայուած է մագիստրոս երաժշտութեան վկայականով: Պր. Պարսումեան տուած է բազմաթիւ համերգներ Պէյրութի, Սուրիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ, եւ հիմնած ու ղեկավարած է զանազան երգչախումբեր, որոնցմէ են՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի երգչախումբը, «Մասթերզինկերզ», «Արմիս», «Որփէոս» երգչախումբը եւ այլ համայնքային ու եկեղեցական երգչախումբեր: Պր. Պարսումեան նաեւ հիմնած է «Համազգային»ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութիւնը վայելող «Բ. Կանաչեան» երաժշտանոցը:

Ան ներկայիս խմբավարն է «Համազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան: Երաժշտական միաւորի նոր ձեռնարկած կիսարհեստավարժ երգչախումբին:

ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 24, 1986

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8-ԻՆ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
## ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
## ՀՈՎԻՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ

Կը ներկայացնէ

# ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

## ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Դասախօս՝ **ՎԱՉԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ**

«ԱՒԵՏԻՍԵԱՆ ՍՐԱՀ», ՀՈՎԻՏ
5300 WHITE OAK AVE., ENCINO

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՇԱՒԱՐՇ ԹՈՐԻԿԵԱՆ

U.B. (London), Ph.D. (Oxford)

Վարած է զանազան պետական պաշտօններ Լիբանանի մէջ եւ դասախօսած Ամերիկեան, Լիբանանեան եւ Գալիֆորնիայի (Irvine) համալսարաններէ ներս, ինչպէս նաեւ Հայկազեան Գոլէճէ եւ Համազգայինի Հայագիտական հիմնարկէն ներս:

Խորհրդատու ՄԱԿի բազմազգեան ընկերութիւններու կեդրոնի մօտ: Ունի բազմաթիւ հրատարակութիւններ: Վարած է Համազգայինի կեդրոնական մարմնի եւ Համազգայինի կեդրոնական վարչութեան նախագահութիւնը:

Հրատարակութիւններ.—

THE LEGAL ASPECTS OF OIL CONCESSIONS IN THE MIDDLE EAST
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ 1972

THE ARMENIAN QUESTION AND THE INTERNATIONAL LAW
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ, 1973

# ԳԻՐ, ԳԻՐՔ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 26, 1986** | **ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7-ԻՆ**

## ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
## Եւ
## ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝

**Թեմիս Բարեջան Առաջնորդ**
**ԳԵՐՇ. Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

## ՅԱՅՏԱԳԻՐ

| | |
|---|---|
| **Բացման Խօսք** | Գուրգէն Գասապեան, Ատենապետ<br>ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-ի Շրջ. Վարչութեան |
| **Մեներգ** | Շաքէ Գազանճեան |
| **Դաշնակի Ընկերակցութիւն** | Մարալ Չաղլասեան |
| **Մենաթատրոն**<br>**Վ. Թոթովենց "Հաճի Սողոմոն"** | Սեդրակ Պրոնզեան |
| **Խօսք** | Փրոֆ. Շաւարշ Թորիկեան |

Գիրքերու ցուցադրութիւն եւ վաճառք մասնակցութեամբ՝ Սարտարապատի, Ազգային Առաջնորդարանի, Ապրիլ, Շիրակ եւ շրջուն գրատուներուն։

«ԱԻԵՏԻՍԵԱՆ ՍՐԱՀ», ՀՈՎԻՏ
5300 WHITE OAK AVE., ENCINO

**ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ**

# ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ
# «ԿՌՈՒՆԿԸ ԿԸ ԿԱՆՉԷ»

(ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ)

Ժագ Յակոբեան ծնած է Երուսաղէմ: Յաճախած է «Գալուստեան» Ազգ. վարժարանը եւ «Պէրպէրեան» գոլէճը, ապա Խորոնֆիշ ֆրանսական գոլէճը, Գահիրէի մէջ: Վկայուած է դեղագործ, Գահիրէի դեղագործական համալսարանէն, 1942-ին: 1956-ին, կ'անցնի Պէյրութ, ուր ուսուցչական պաշտօն կը վարէ մինչեւ 1965: Հոնկէ կրկին կը գաղթէ Աւստրալիա, յետոյ՝ Ամերիկա, 1967-ին:

Սկսած է գրել նախ ֆրանսերէն լեզուով: 1938-ին, լոյս կը տեսնէ իր անդրանիկ քերթողագիրքը՝ «Գաղտնի Ժամբան», որ կ'արժանանայ քննադատ Նիկոլ Աղբալեանի բարձր գնահատանքին: Անոր կը հետեւին ուրիշ հատորներ:

Ժագ Յակոբեան հոգեւոր վերածնունդ մը կ'ունենայ 1948-ին:

«Կռունկը կը կանչէ»ն գրուած է 1954-ին եւ հրատարակուած՝ Պէյրութ, «Ակօս» ամսագրին մէջ, 1956-ին:

«Կռունկը կը կանչէ» սփիւռքահայ կեանքէ առնուած հայաշունչ թատրերգութիւնը առաջին անգամ ներկայացուած է Պէյրութի մէջ, 1977-ին, Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբին կողմէ, բեմադրութեամբ հանրածանօթ բեմադրիչ՝ Ժորժ Սարգիսեանի:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 30, 1986 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8-ին

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
# ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
# ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ ԳՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

## ՊՏՂԱՁՕՆ

ՆՈՒԻՐՈՒԱԾ

**ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆԻ**

«ԿՌՈՒՆԿԸ ԿԸ ԿԱՆՉԷ» ՀԱՏՈՐԻՆ

«ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍՐԱՀ» - ՀՈԼԻՎՈՒՏ
1615 N. ALEXANDRIA AVE., HOLLYWOOD

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ
## 1986 - 1987

**ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

| | |
|---|---|
| ԺՈՐԺ ԱԲԷԼԵԱՆ | Ատենապետ |
| ՍԱՐԳԻՍ ԴԱՐԲԻՆԵԱՆ | Փոխ-Ատենապետ |
| ՎԱՐԴԳԷՍ ԱՆԻԻԵԱՆ | Գանձապահ |
| ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ | Հաշուապահ |
| ՆՈՐԱ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ | Քարտուղար |
| ՅԱՍՄԻԿ ԹԱՇՃԵԱՆ | Խորհրդատու |
| ԺՈՐԺ ՄԱՀՐՈՒՔԵԱՆ | Խորհրդատու |
| ԱՐՓԻ ՏԷՄԻՐՃԵԱՆ | Խորհրդատու |

**ՀՈՎԻՏ**

| | |
|---|---|
| ՄԱՐՏԻԿ ԿԱՊՈՒՏԵԱՆ | Ատենապետ |
| ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ | Փոխ-Ատենապետ |
| ԱԴԻԿ ԱԲԴՈՒԼԵԱՆ | Ատենադպիր |
| ԱՍՏՂԻԿ ՄԱՆՈՒՉԵՐԵԱՆ | Հաշուապահ |
| | Գանձապահ |
| ԹԱՔՈՒՇ ՆԱԶԱՐԵԱՆ | Խորհրդատու Կազմ |
| ԷՄՄԱ ՌԱՓԵԼԵԱՆ | |
| ՎԵՀԱՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ | |
| ԳԱՌՆԻԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ | |
| ԱՆԹՕՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ | |

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
# ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
# ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆ

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆ | Ատենապետ |
| ՀՐԱՅՐ ԱՒԵՏԵԱՆ | Փոխ-Ատենապետ |
| ԱՏՈՒՐ ԱՂԺԱՅԵԱՆ | Գանձապահ |
| ՎԱՀԷ ԳԱՊԱԳԵԱՆ | Ատենադպիր |
| ԳՐԻԳՈՐ ԱԼԱԺԱԺԵԱՆ | Քարտուղար |
| ԱՆԱՀԻՏ (ՄԱՐԳԱՐԵԱՆ) ԱԺՈՒՆԵԱՆ | Խորհրդական |
| ՈՍԿԱՆ ԺԻՆԵԱՆ | Խորհրդական |
| ՅԱՐՈՒԹ ՊԱԼԵԱՆ | Սան Ֆրանսիսքօ |
| ԵԴՈՒԱՐԴ ՄԿՐՏԻՉԵԱՆ | Ֆրէզնօ |

Կեդրոնական Վարչութեան Ներկայացուցիչ՝
ԲԱԲԳԷՆ ՍԱՍՈՒՆԻ

# ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
# ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ

| | | |
|---|---|---|
| **ՄՈՆԹԷՊԵԼԼՕ** | ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ | Ատենապետ |
| | ՅԱԿՈԲ ՊԱՇՄՈՒՔՃԵԱՆ | Փոխ-Ատենապետ |
| | ՀԵՂԻՆԷ ՀԱՐՊՈՅԵԱՆ | Ատենադպրուհի |
| | ԱՐԱ ՀԱՐՊՈՅԵԱՆ | Գանձապահ |
| | ՎԻՎԵԱՆ ՔԷՇԻՇԵԱՆ | Խորհրդական |
| | ԼՈՒՍԻՆ ԳԱԼՍՏԵԱՆ | Խորհրդական |
| | ԺՈՐԱ ՄԱՐԳԱՐԵԱՆ | Պարախումբի պատասխանատու |
| **ԿԼԷՆՏԷԼ** | ՄԿՐՏԻՉ ՍՕՍԻԿԵԱՆ | Ատենապետ |
| | ՎԱՀԷ ՀԱՅՐԻԿԵԱՆ | |
| | ՄԱՐԱԼ ԱՂԱԽԱՆԵԱՆ | |
| | ԱՐՈՒՍԵԱԿ ԱՍՏՈՒՐԵԱՆ | |
| | ՍԻԼՎԱ ՍՕՍԻԿԵԱՆ | Ատենադպիր |
| | ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ | Գանձապահ |
| | ԾԱՂԻԿ ՋԱՐԳԱՐԵԱՆ | |
| **ՓԱՍԱՏԻՆԱ** | ԻՍԿՈՒՀԻ ԽԱՉԵՐԵԱՆ | Ատենապետուհի |
| | ՍԻՐԱՆ ԳՈՒՇԵԱՆ | Ատենադպրուհի |
| | ՋՕՀՐԱՊ ԹԱԹԻԿԵԱՆ | Փոխ-ատենապետ |
| | ԱՂԱՒՆԻ ԱՃԻՒՆԵԱՆ | Գանձապահ |
| | ՅՈՎԻԿ ՉԱԼԹՈՐՈՍԵԱՆ | Խորհրդական |
| | ՄԻՍԱՔ ԳԱՅՍԵՐԵԱՆ | Խորհրդական |

| | | |
|---|---|---|
| **ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՕ** | ԵԴՈՒԱՐԴ ՄՍՐԼԵԱՆ | Ատենապետ |
| | ԳԷՈՐԳ ՊՈՒՐՍԱԼԵԱՆ | Փոխ-Ատենապետ |
| | ԱՆՈՒՇԱՒԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ | Ատենադպիր |
| | ԱՐԱ ԹԱՀՄԱԶԵԱՆ | Գանձապահ |
| | ՆԱԶԱՐԷԹ ՊԻՏԱՆԵԱՆ | Խորհրդական |
| | ԿԱՐԻՆԷ ՓԷԼԻՎԱՆԵԱՆ | Խորհրդական |
| | ՎԵՐԺԻՆ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ | Խորհրդական |

| | | |
|---|---|---|
| **ՖՐԷԶՆՕ** | ՍՐԲՈՒՀԻ ՄՍՐԼԵԱՆ | Ատենապետուհի |
| | ԳՐԻԳՈՐ ՔՕՀԱՅԵԱՆ | Փոխ-Ատենապէտ |
| | ՎԱՐՈՒԺԱՆ ՏԷՐ ՍԻՄՈՆԵԱՆ | Ատենադպիր |
| | ԱԼՄԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ | Գանձապահ |
| | ԱՐԱՔՍԻ ԳԱԼԷՆԵԱՆ | Խորհրդական |

# ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Պրն. Վարուժան Գունտագճեան
Մարկրիթ եւ Ռապըրթ Սաթիկեան
Պրն. Հրանդ Մանկասարեան
Տէր եւ Տիկին Հրայր Աւետեան
Տէր եւ Տիկին Վահէ Գապագեան
Տէր եւ Տիկին Ատուր Աղճայեան
Տոքթ. եւ Տիկին Հրայր Գապագեան
Տէր եւ Տիկին Նիկոլ Մարգարեան
Տէր եւ Տիկին Պետրոս Ալահայտոյեան
Բագրատունի Ընտանիք
Տէր եւ Տիկին Գառնիկ Գազանճեան
Տէր եւ Տիկին Վարուժան Տէմիրճեան
Տէր եւ Տիկին Վազգէն Ամիրխանեան
Պրն. Հրաչ Որբերեան
Տոքթ. Յակոբ Եագուպեան
Տէր եւ Տիկին Գուրգէն Գասապեան
Տէր եւ Տիկին Գէորգ Աթմաճեան
Տէր եւ Տիկին Պետրոս Ղազարեան
Տէր եւ Տիկին Ռ. Մելքոնեան
Տէր եւ Տիկին Ա. Մոնասախանեան
Տէր եւ Տիկին Վահագն Մաղաքեան
Արեւմտեան Ամերիկայի Ազգային Առաջնորդարան
Պրն. Կայծակ Ջէյթլեան
Պրն. Ռազմիկ Պէրպէրեան
Տէր եւ Տիկին Վարդգէս Ալահայտոյեան
Հ.Օ.Մ.-ի Նայիրի Մասնաճիւղ - Մոնթեպելլօ
Տէր եւ Տիկին Նշան Փիրումեան
Տէր եւ Տիկին Գառնիկ եւ Մարի Օհաննէսեան
**Mr. Deli Catering**
Ռատիօ Նայիրի

# ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՅ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

**ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆ**
ՀԱՄԱԴՐՈՂ

**ՄԱՐՏԻԿ ԿԱՊՈՒՏԵԱՆ**
ԱՏԵՆԱՊԵՏ

Յարաբերական
**ԺՈՐԺ ԱԲԵԼԵԱՆ**
**ՎԱՆՈՒՀԻ ՄԱՐՏՈՅԵԱՆ**
**ԺՈՐԱ ՍԱՐԵԱՆ**

Ճաշկերոյթ
**ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ**
**ՎԱՐԴԻ ԵԱՂԼԵԱՆ**
**ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ**
**ՀԵՂԻՆԷ ՀԱՐՊՈՅԵԱՆ**
**ԱՐԱ ՀԱՐՊՈՅԵԱՆ**
**ՎԵՀԱՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ**
**ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ**
**ԱՐՓԻ ՄԻՀՐԱՆԵԱՆ**
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԻՆԵԱՆ**

ԳՐՔՈՅԿ
**ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆ**
**ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ**

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Հայ Մշակութային Ընկերակցութիւն
Armenian Cultural Association HAMAZKAYIN, Inc.

419 West Colorado, Glendale, California 91204

Vortco printing
(818) 980-8255